



Ա. Մ Ա Տ Ա Ղ,

1. — Կոչումն ու սահման: — Մատաղ՝ ընդհանուր անունն էր այդ կարգի կերակրոց (Տար. Թէոփ. 282. Ընդհ. 154, '60), եւ մասնաւորապէս առաջնոյն, այս ինքն բարեգործականին, ինչպէս կը գործածեն կրտսեր դարու մատենագիրք, Շնորհալին (Ընդհ. 156), Կոստանդին Ա. (Կիր. 172), Յովհ. Եզնկացին (Խրտ. Ժ) եւ այլք. եւ զոր Ս. Սահակայ կանոնաց մէջ ալ կը գտնենք՝ «մատաղենիք» ամանց ձեւով (111, '13): Հաւանօրէն անունս ծագած է սոյն ճաշերու մէջ յաճախ մատաղ կամ նոր անասնոց գործածութենէն, ինչպէս Հրեայք ալ կը զոհէին միշտ փափուկ կենդանիներ (Ղեւտ. ԻԲ, 27), այս ինքն «ոչխար տարելոր» (Ելք. ԺԲ, 5), «որթ տարելոր» (Թիւք, Ը, 8) կամ «զորթ մատաղ» (Սղմ. ԿԸ, 32): Ասկից շատ հեռի է Տաթեւացւոյն տղայական ստուգաբանութիւնը՝ «մատո՛ աղ» (Հրց. 657), ըստ որում աղ կը կերցնէին անասնոյն, ինչպէս պիտի տեսնենք: